

ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ

Արեւադալի երգն է այս, լոյսի աստուածային երգը, ամբողջ արեւելքը, հայ մտքի լոյսը, հայ հաւատքին աղբերացումը մեր ժամերուն կիսախորհուրդ կամարներուն տակ: Լոյսը որ սկիզբ չունի, լոյսը որ վախճան չունի, Աստուծոյ հետ անբաժան ծիրանի, իրերու սրբութիւն եւ միշտ առաւօտ բարի:

Քանի՜ առաւօտներ կու գան կ'անցնին, բայց այս լոյսը յաւերժական կը մնայ, ինչպէս յաւերժական է ինքն Աստուած եւ լոյսէն անդին ամէն բան առաւօտ ու դիւեր:

Երբ արեւուն շողերը կը բախեն մեր ժամերուն քնաթաթախ ապակիներուն, աստուածային լոյսը բանտարկուած հոգիներուն մէջ կը բանայ իր թեւերը՝ համբուրելու արդարութեան Արեւակին համափառ քայլերը: Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս, բնակեալի ի լոյս անմատոյց: Ոչ մէկ աղղ, ոչ մէկ զաւանանք իր ամէնօրեայ կեանքը լոյսին երգով կը սկսի: Յեղի մը յաւերժութեան երգն է որ յարութիւն կու տայ տառապանքներուն, որ կը կենդանորդէ հոգիներուն մէջ մշտանորդ զարուններ եւ մահն անմահութեան կը փոխէ, եւ մեր ժամերը կը դառնան լոյսի հսկայ բաժակներ ուսկից կ'երթայ ըմպելու հոգեծարաւ իմ աղղս — ի ծագել լուսոյ առաւօտու՝ ծագեալ ի հոգիս մեր գոյս քն իմանալի: Մերկանալ մարդկութենէ, զրանորել իր ներաշխարհը որ դայ Արդարութեան Լոյսը եւ դայն լեցնէ անպատում գեղեցկութեամբ, անխմանալի սրբութեամբ, եւ մարդը դառնայ թափանցիկ չափիւղայ, բարութեան արդար հոսում, եւ այն ատեն հոգեքնար Նարեկացին կը յայտնուի մեր խորաններուն վրայ՝ բսելու իր ժողովրդեան թէ՛ Երբ անստուեր շողերը կը ծագին՝ կը հեռանայ մառախուղը, կը փարատի մոռյալանքը, աղջամուղջը կը չփանայ, կը վերնայ մութը, կ'անցնի գիշերը: Եւ լոյսը կը տիրապետէ հոգիներուն վրայ գերբնական զօրութեամբ, անզօրութիւն տալով խոռոմ սրտերուն,

լոյս տալով ապագային եւ խաչանիչ զրօշ պայքարներու մէջ:

Փափուկ թաւիչի պէս երբ արեւադալի լոյսը մեղմօրէն կ'իջնէ մեր դէմքերուն վրայ, եւ աչքերը կ'օծուին աստուածային երանութեամբ, այն ատեն երկնային սէրն է որ լրում կու տայ մեր հոգեղէն կեանքին: Աստուած ու տկար մարդը կը շրջաթալտին իրարու խոնկերու ծիրանի հովանիին տակ:

Ո՛րքան երախտապարտ պէտք ենք լրալ այն աստուածային հոգիով արեցած բանաստեղծին որ հոգեղէն թուիքներով անցաւ արեւակներ, կտրեց երկինքներ եւ տիեզերքի համայն գեղեցկութիւնը լոյսի մէջ ամփոփելով՝ տուաւ մեզի քերթուածներու քերթուածը:

Եթէ բազմատենք Միլտոնի լուսերդութեան հետ, երբ իր Դրախտ կորուսեալին մէջ կ'երգէ թեւաւոր քնարով —

Լոյս սուրբ, ողջոյն քեզ, անդրանիկ ծնունդ երկկամ Միշտիկն յաւերժակից քառագայր. [Ո՛հ Կրնամ քեզ ա՛յդպէս անուանել անբասիր. Զի լոյս է իմքն Աստուած, եւ չէ բնական Յաւիտեանից բայց անմատոյց լոյսին մէջ, Քու մէջդ ուրեմն բնակեցաւ, ո՛վ զուարթ ծագումն, գուարք անեղական էութեան...:

Մարդկային երգ է ասիկա, մարդն է որ կը խօսի մանուկի պէս հեղեղով, կոյրի նման խարխափելով մշուշոտ աշխարհներու մէջ, որոնելու համար յաւերժակից ճառագայթ մը: Մինչ մերը, մեր Լոյսի երգը երկնքէն կու գայ. Աստուած ինքն է որ բանաստեղծն է մեր լոյսին, որուն բառերը բնական են, աստուածաբանական, բնականական երկինքներու իմաստութեան ծնունդ: Ոչ արեւադաշտները կրնային ստեղծել այսպիսի երգ մը, Միհրը Զանդիկ բոլոր իմաստութեամբ, անոնց Արեւը պատառ մը երկինք միայն կը լուսաւորէր, յաղթուելով ամէն երեկոյ խաւարի համապարփակ թեւերէն:

Իսկ հայկական արեւը կը ծագի, հայ

միտքը կանգ չ'առնեն կտոր կտոր երկինքը լուսաւորող աստղին վրայ, նա կը թռչի դէպի անասմանը, կը ճեղքէ մեղի անծանօթ երկինքներ, երթալու հասնելու համար Անոր որ է եւ կայ յաւերժօրէն Լոյս ինքը եւ արարիչ լոյսի:

Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս բնակեալի ի լոյս անմատոյց՝ Հայր երկնաւոր ի դասուց լուսեղիմացն օրհնեալ, ի ծագել լուսոյ առաւօտու ծագեալ ի հոգիս մեր գոյս քն իմանալի:

Լոյս ի լուսոյ ծագումն Արեգակն արդար Անհառ ծնունդ չօր Որդի...

Ո՛չ, Միլտոն պիտի չկարենար ստեղծել այս հրաշալի բանաստեղծութիւնը, իր մտքի թեւերը կանգ կ'առնեն աղօտ ճառագայթներու վրայ, իր լոյսը միայն մարդկային մարմինն ու աչքերը կ'օծեն, կարծես չօչափելի նիւթ է, ծաղիկներու զոյն, բնութեան երեսը սրբող թաշկինակ: Նիւթէն անդին հոգեկան անծանօթ տիեզերք մը կայ մեր երգին մէջ, ուրիշ դաւաններ, անչօչափելի ուրիշ գեղեցկութիւն, անչափելի ուրիշ աստուածութիւն: Մեր երգը չի՛ փնտռեր նիւթական օր, չի՛ երազեր ծաղկազուարճ առաւօտ մը, այլ հոգիներու աշխարհը փոխադրուած երանութեանց երանութիւնը կ'երգէ, որպէսզի բացուին իր առջեւ ճամարտութեան ճանապարհը, բարի քանապարհը, ուսկից անցան այնքան նահատակներ, ճգնաւորներ, հայրապետներ եւ լուսապսակ սրբուհիներ:

Համամարդկային է այս երգը, Յարեւելից յարեւմուտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ, ուր որ անծանօթ մէկը, ուր մարդը մարդու կողքին նոյն պիշտոն ունի, նոյն

լոյսին կարօտ, բոլորին համար է մեր երգը, բոլոր մարդկութեան մեր լոյսի աղօթքը: Ոչ մէկը պէտք է զրկուի մեր լոյսի բարիքէն, Արդարութեան Արեգակը բոլորին համար է, բոլորին հետ եւ բոլորին վրայ:

Ի՞նչ անոյշ ջերմութիւն է որ կը զգայ մեր հոգին, երբ լոյսին թեւերը աղօթք դարձած կու գան զմեզ պատելու, ոչ մէկ ճմեռնային օճախ այս քաղցրութիւնն ունի, ոչ մէկ ամառնային արեգակ այսքան կենսատու զօրութիւն: Արքայութեան Արեգակին նախաճաշակումն է, կը լիացնէ զմեզ, կը պատէ անասման աղապատանքով: Չեն մերձենար իրեն տրտում ըստուերներ, չեն խաւարեր դիմքը թախծութեան ամպեր: Միշտ զուարթ է, միշտ զոհ, միշտ երջանիկ, միշտ անսպառ հոսում:

Եւ ան կու գայ մեզի երգի փոխուած, ինչպէս աստուածային սէրը, չի՛ արտասանուիր, չի բացատրուիր, չի մեկնուիր: Զինքը պէտք է միշտ երգել առաւօտուն Արեգակ արդարութեան, երեկոյեան Լոյս զուարթ: Եւ դայն պէտք է որ բոլոր տիեզերքը երգէ, ամբողջ մարդկութիւնը, հազար բերաններով, հազար շրթունքներ թրթռան, հազար բազուկներ շարժին, հազար բուրվառներ ճօճին:

Ի՞նչ զարմանալի հրաշք է այս երգին գեղեցկութիւնը որ կը թափանցէ հոգիներուն մէջ, մաղմաղ անձրեւի նման որ լոյսի ջերմութեան հետ կը բուսցնէ տարաշխարհիկ ծաղիկներ: Հոգիներու անդաստանները կը կանաչան, սեւ ոխն ու քէնը, մաղձ ու թախիժ, ատելութիւն եւ նախանձ տեղի կու տան համայնասէր բարութեան՝ բանալով երկրէ երկինք ճառագայրի բարի:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Հալեպ, 1953

